

Ս. ԳՈՒԼՈՅԱՆ

ՆՈՐ ԵՏԱՊԸ

338.98

Գ-95

ԲԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՊՂԺՈՂԿՈՄԱՏԻ
ՅԵՐԵՎԱՆ-1981

17 FEB 2010

338.58
9-95

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐ

Ա. ԳՈՒԼՈՅԱՆ

ԳՐԱՅԻՆ ԳՈՐԾ

ՆՈՐ ԵՏԱՊԸ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ԳՐԱԿԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԺՈՂԿՈՄՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ-1981

12.7 MAR 2013

31.946



2282-87

Հրատարակություն Հոդվածի համար № 35 (126)

Գրառես. № 6340 (բ). Պատ. № 1921. Տիրաժ 1,500

Պետերատի տպարան Ֆերևան

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս գրքույկը արտատպւթյունն է «Լինինյան ու-
զի»-ի 1930 թ. № 7-8-ում տպագրված հոդվածի:

Նկատի ունենալով, Վոր կուսակցական լայն ակ-
տիվի համար նոր հտապի հիմնական խնդիրների հախ-
նական ուսումնասիրության տեսակետից այդ հոդվածը
ոգտակար կարող է լինել, մենք հարկ համարեցինք
այն հրատարակել առանձին գրքույկով, առանց վորեն
փոփոխություն մտցնելու նրա մեջ, բացի 37 էջում
ընկ. Մոլոտովի խորհուրդների 6-րդ համագումարում
արած զեկուցումից մեջ բերված մի կտորից:

Գրքույկի հիմնական նպատակն է—պարզել նոր
ետապի ելությունը և դրա հետ կապված կուսակցու-
թյան հիմնական խնդիրները սոցիալիզմի կառուցման
ընագավառում: Այստեղ հարկ էմ համարում միակա-
տողությունն անել համատարած կոլեկտիվացման հիման
վրա կուլակությունը վորպես զասակարգ լիկվիդա-
ցիայի յենթարկելու լողունգի կերտուման վերաբերյալ՝
Խ. Հայաստանի պայմաններում:

Այդ լողունգը պանպանելով իր ուժը վորպես ա-
աջատար լողունգ ամբողջ Միության և նրա բոլոր
մասերի համար, վորոշ լրացման ու պարզեցման կարիք
ունի Միության ավելի հետամնաց մասերի համար:

Պորհրդային Հայաստանում, վորպես Միության
ավելի հետամնաց ծալրամասերից մեկը,—զեռես չեն

ստեղծված այն բոլոր նախադրյալները, վորոնք անհրա-
ժեշտ են այդ լողունգի անմիջական և լրիվ կիրառման
համար: Իրա համար ել, մեր առաջ, վորպես հիմնական
խնդիր, դրված և ամենակարճ ժամանակվա ընթացքում
ստեղծել կուլակուլթյունը վորպես դասակարգ վերաց-
նելու անհրաժեշտ նախադրյալները:

Այդ նախապայմանները պիտի ստեղծել այն զի-
բեկտիվները համապատասխան, վոր տվել և Ս. Հա-
լաստանի Կոմկուսի Կոննարոնական Կոմիտեն. «Գլը-
խավորելով կոլտնտեսական գարնանային նոր ակիբը,
անողոր պայքար մղելով դասակարգային թշնամու և
նրա ագենտուրաների դեմ մեր շարքերում, բարձրաց-
նելով կոլտնտեսականների, չքավոր-միջակ լայն մաս-
սանների ախտիվուլթյունը—կուսակցական կազմակեր-
պուլթյունները պիտի ստեղծեն այն բոլոր պայման-
ները, վորոնք անհրաժեշտ են ամենակարճ ժամանա-
կում անցնելու համատարած կոլեկտիվացման և դրա
հիման վրա կուլակուլթյունը վորպես դասակարգ լիկ-
վիդացիայի չինթարկելուն»:

ՀԵՂԻՆԱԿ

1931 թ. մարտ,
Յերևան.

ՆՈՐ ԵՏԱՊԸ

ՎՈՐՆ Ե ՆԵՊ-Ի ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Մենք թեակոխել ենք մեր դարգացման նոր
ըրջանը, վորը բնորոշվում է նրանով, վոր մենք
ծավալուն արշավ ենք սկսել յերկրի կապիտա-
լիստական տարրերի դեմ և անցել ենք դյուզա-
տնտեսուլթյան սոցիալիստական անմիջական վե-
րակառուցմանը: Այդ անցումը կատարվում է
ՆԵՊ-ի հիման վրա և նրա շրջանակներում, ուստի
ՆԵՊ-ի ելուլթյան հարցը կազմում է մեր քաղա-
քականուլթյան նոր ետապի բովանդակուլթյան
և ելուլթյան պրոբլեմի անբաժան մասը:

Նոր ետապի բովանդակուլթյան ճիշտ հար-
ցադրումը և նրան ուղիղ լուծում տալը՝ հնավա-

վոր և միայն ՆեՊ-ի ճիշտ լենինյան հասկացման հիման վրա: Դրա համար ել գործմանալի չե, վոր նոր ետապի շուրջ տեղի ունեցող գլխուսխալում առանձին բնկերները բոլոր սխալները և կուսակցության գծի ուղղորտնիստական մեկնաբանումները բղխում են նախ և առաջ ՆեՊ-ը սխալ հասկանալուց: Բնորոշ է, վոր նոր ետապի սխալ մեկնաբանումը հիմնավորելու համար կյանքի լին կոչվում ՆեՊ-ի այնպիսի «տեսություններ», վորոնք վաղուց ի վեր ժխտված են կուսակցության կողմից: Այդպիսիների թվին ևն պատկանում արոցկիստական-գինովչեվյան այն «տեսությունը», վորը ՆեՊ-ը համարում է սոսկ մի նահանջ: Այդ տեսությունը ժամանակին մերկացվել ու բնութագրվել է վորպես լենինիզմի հետ վոչ մի առնչություն չունեցող տեսություն:

Անտարակույս, ՆեՊ-ին անցնելը 1921 թվականին մի նահանջ էր այն քաղաքականությունից, վոր վարում էր կուսակցությունը ռուսական կոմունիզմի շրջանում, իսկ այդ քաղաքականությունը սոցիալիզմի անմիջական կառուցման քաղաքականությունն էր: Նրա նպատակն էր նախկին ցարական Ռուսաստանում իրականացնել արտագրության և բաշխման սոցիալիստական ձևերը: Սակայն, այն քաղաքականությունը, վորին ծնունդ էլին տվել քաղաքացիական կառաղի պատե-

րազմն ու լինտերվենցիան և վորի նպատակն էր պահպանել ու ամրացնել պրոլետարիատի դիկտատուրան, չէր կարող հաջողությամբ պսակվել տնտեսական չափազանց աննպաստ այն պայմաններում, վորոնց մեջ ապրում էր Սորհրդացին Ռուսաստանը:

Ռուսաստանի պրոլետարիատը ցարիզմից ժառանգություն ստացավ չափազանց հետամնաց, իմպերիալիստական պատերազմից քայքայված մի յերկիր, վորտեղ գերակշռում էր մանր գյուղացիական տնտեսությունը: Քաղաքացիական պատերազմի ժամանակ մեր արդյունաբերությունն ու արանսպորտը հասան գրեթե լիակատար քայքայման: Պարենի ռազվյորստիան, վոր անհրաժեշտություն էր քաղաքացիական պատերազմի պարմաններում, վորը սակայն չէր համապատասխանում մանր գյուղացիական տնտեսության եկոնոմիկային և այդ եկոնոմիկայից բղխող տնտեսական կապի ձևերին, չէր կարող կասեցնել իմպերիալիստական պատերազմի և քաղաքացիական կռիվների հետևանքով սկսված գյուղատնտեսության և արտադրական ուժերի քայքայումը և նպաստել նրանց հետագա զարգացմանը: Գյուղատնտեսությունն սկսեց հետադիմել, վորով չափազանց սուր ձգնաժամ ստեղծվեց արդյու-

նաբերութեանը հումուլթ և քաղաքին միտերք հայթայթելու աստարիզում:

Անհրաժեշտ էր նահանջի դիմել, հրաժարվել ազգմական կոմունիզմից, սոցիալիզմն անմիջա-կանորեն իրագործելու քաղաքականութունից: Անհրաժեշտ էր նախ և առաջ թույլ տալ սուրբանքների ազատ շրջանառութուն, վորի պայ-մաններում գլուղայիական մանր անտեսութուն-ները կարողանային գարգանալ և այդպիսով նա-խադրյալներ ստեղծել գլուղատնտեսութեան վե-րելքի և արդունաբերութեան ու արանսպարաի-աշխուժացման համար:

1921 թվականին, Լենինը, ապրիլ ազմա-կան կոմունիզմի գնահատականը և հիմնավորելով մեր անցումը տնտեսական նոր քաղաքականու-թյան, ասել է հետևյալը.

«Մենք սխալ գործեցինք, վոր վորոշեցինք անմիջապես անցնել կոմունիստական արտադրու-թյան և բաշխման...: Մեր տնտեսական նոր քա-ղաքականութունը, ըստ ելուժյան, հենց այն է, վոր այդ գործելակերպի մեջ (այսինքն՝ ազմա-կան կոմունիզմի գործելակերպի: Ս. Գ.) խոշոր պարտութուն կրեցինք և զիմեցինք ստրատեգիկ նահանջի»:^{*})

^{*}) Լենին — Յերկրի ժողովածու, հատ. 18, մաս 1, էջ 372:

Այդ նահանջը, վորի արտահայտութունն էր նախ և առաջ շուկայի և ապրանքների ազատ շրջանառութեան թույլաբուծը, մի զիջում էր մանր գլուղայիական անտեսութեանը: Բայց դա միաժամանակ նշանակում էր վորոշ չափով թույլ տալ նաև կապիտալիզմը, քանի վոր, ինչպես բազմիցս մատնանշել է Լենինը, գլուղացիական մանր անտեսութունը բազա չէ հանդիսանում կապիտալիստական հարաբերութեանների զար-գացման համար: Սակայն, յեթե պրոլետարիատը թույլ տվեց ազատ առևտուրը և կապիտալիստա-կան հարաբերութեանների զարգացումը, աչդ գեռ չի նշանակում, վոր նա մեր տնտեսական զարգացումը մատնեց ապրանքային տնտեսու-թյան տարերային որենքների ամբողջական ազ-դեցութեանը:

Պրոլետարիատը, ունենալով իր ձեռքում պետական իշխանութունը և ախրապետելով տնտեսական բարձունքներին, կարգավորում է տնտեսական պրոցեսները, տալիս է նրանց վորոշ ուղղութուն, նպատակ ունենալով ոգտագործել ՆեՊ-ի հիման վրա: տեղի ունեցող ժողտնտեսական աճումը՝ սոցիալիստական տարբեր ուժեղայնելու համար:

«Մենք այժմ նահանջում ենք, բայց այդ ա-նում ենք այն նպատակով, վոր նախ նահանջենք

և ապա թափ առնենք ու ավելի ուժեղ թափչք գործենք դեպի առաջ: Միայն այդ պայմանով է, վոր մենք հեռ նահանջեցինք մեր տնտեսական նոր քաղաքականությունն անցկացնելու համար»*):

Պարզ է: ՆեՊ-ը վոչ միայն նահանջ է, այլ և հարձակում: Ռազմական կոմունիզմից ՆեՊ-ին անցնելը միայն նահանջ չէր, սոցիալիստական շինարարությունից հրաժարում չէր: Այդ նշանակում էր միայն փոխել սոցիալիստական շինարարարության ձևերն ու մեթոդները, կապիտալիզմի վրա գրոհ տալուց անցնել նրան պաշարելու մեթոդներին: Կուսակցությունը թույլ տալով, վորոշ սահմաններում, ազատ առևտուրը և կապիտալիզմի զարգացումը, ձգտում էր ախրապետել, ՆեՊ-ի հիման վրա, յերկրում տեղի ունեցող տնտեսական պրոցեսները և դրան զուգընթաց, զարգացնել իր արշավը յերկրի կապիտալիստական տարրերի վրա ու ամրացնել սոցիալիստական շինարարության հիմքը

Այսպիսով, ՆեՊ-ն ունի յերկվտական բնույթ պարունակում է վոչ միայն նահանջի, այլ և հարձակման մոմենտներ: Այդ յերկու մոմենտների փոխադարձ պայքարը, վորտ գ հետզհետե գե-

*) Լենին, — Յերկեր, հատ. 18, մաս 2, էջ 103:

րակշռում է հարձակման մոմենտը, կազմում է ՆեՊ-ի բովանդակությունը: ՆեՊ-ին անցնելուց հետո առաջին տարին գերակշռում էր նահանջը, քանի վոր այն ժամանակ հարկ յեղավ նահանջել ամբողջ Ֆրոնտում: Սակայն, վերջին տարիներս, մեր տնտեսական ամրացմանը զուգահեռ, սկսում է գերակշռել կապիտալիզմի դեմ ուղղված հարձակման մոմենտը, յերբ հիմնվելով սոցիալիստական շինարարության հիմքն ստեղծելու ասպարիզում մեր ձեռք բերած հաջողությունների վրա, մենք անցանք նոր ետապին՝ կապիտալիզմի վրա ծավալուն հարձակմանը և սոցիալիզմի անմիջական կառուցմանը:

Այս է Լենինի հեղափոխական ուսմունքը ՆեՊ-ի մասին: Զինովեր միայն նահանջ էր տեսնում ՆեՊ-ի մեջ: Ընկեր Բուխարինը «Լենինի քաղաքական կտակը» կոչվող իր հոշակավոր ձառում ոպորտունիստական մեկնաբանում տալով ՆեՊ ին, նրա էյուլթյունը համարում է ազատ առևտրի թուլատրումը: Նույն այդ հակալենինյան հայացքների գիրկն է գլորվում ընկ. Ռոզենսալլ՝ նոր ետապի հարցերին նվիրած իր հոդվածներում: Զհասկանալով ՆեՊ-ի յերկվությունը, ընկ. Ռոզենտալը ՆեՊ-ի մեջ տեսնում է միայն նահանջ: Համարելով առևտուրը, կապիտալիստական հարաբերությունները ՆեՊ-ի բնո-

յո՞չ առանձնահատկությունները, ընկ. Ռոզենտալը գտնուում է, վոր ՆեՊ-ական մեթոդները վերջնական նպատակն է չեղել «ստեղծել այնպիսի պայմաններ, վորով հնարավոր լինի սոցիալիստական շինարարության միջանկյալ ողակներից անցնել անմիջական սոցիալիստական շինարարության»։*)

Յեթե ընկ. Ռոզենտալի տեսակետով ՆեՊ-ը միայն նախապայման է ստեղծել սոցիալիստական շինարարության համար, ապա ակներև է, վոր ՆեՊ-ի ժամանակ պրոլետարիատը սոցիալիզմի հիմքն ստեղծելու և այն ամրացնելու վո՞չ մի քաղաքականություն չի վարել։ Յեվ իսկապես, հենց այդ յեզրակացությանն է հանգում ընկ. Ռոզենտալը, չերբ պնդում է, թե ՆեՊ-ի ելուժյունն է՝ «չխորատակել հասարակական-տնտեսական հին կարգերը, նպատակ չղնել գյուղատնտեսությունն անհապաղ սոցիալիստական վերակառուցման չեմթարկելու խնդիրը»։**)

Այսպես պնդել, նշանակում է վո՞չ միայն հակասել բոլշևիկյան սևոմոնքին ՆեՊ-ի մասին, այլ և չգիտենալ ՆեՊ-ի պատմությունը, չնկատել այն իրական և խորը փոփոխության-

ները, վորոնք տեղի չեն ունեցել ՆեՊ-ի գոյության ընթացքում։ Մասնավոր կապիտալի համարյա դուրս մղելն արդյունաբերության և առևտրի ասպարեզից, կոոպերացիայի լայն զարգացումը քաղաքում և գյուղում, բանկերի կենտրոնացումը պրոլետարական պետության ձեռին, սոցիալիստական ելեմենտների զարգացումը գյուղատնտեսության մեջ և այլն, - դրանք բոլորն էլ հանդիսանում են հնի խորատակմը, վոր տեղի չէ ունենում ՆեՊ-ի հիման վրա։ Դեռ մի կողմ թողնելով 15-րդ համագումարի այն վորոշումը, թե կոլեկտիվացումը և կապիտալիստական տարրերի վո՞չնչացումը հանդիսանում է գյուղատնտեսության զարգացման մեր հիմնական գիծը, պետք է շեշտել, վոր Լենինը ՆեՊ-ի առաջին իսկ որերին գտնում էր, վոր ՆեՊ-ի հիմնական խնդիրները մեկն է խոշոր հանրալին արտադրության ստեղծումը գյուղատնտեսության մեջ։ 1921 թվականին, Ռեկ-յան տակտիկային վերաբերյալ թեղերում, վորոնք ընդունվել են Կոմինտերնի 3-րդ կոնգրեսում, Լենինը գրել է հետևյալը.

«Ներկա մոմենտի գլխավոր խնդիրն է՝ ճիշտ վորոշել և իրականացնել այն միջոցները, վորոնք անհրաժեշտ են գյուղացիությանը ղեկավարելու, նրա հետ հաստատուն գաղիք կնքելու համար, մի շարք աստիճանական անցումներ կա-

*) Ռոզենտալ, «Նոր կոտորում» (Բալլետիկ, № 5, 1930, էջ 71)։

***) Նույն տեղը, էջ 59։

տարեկուս դեպի խոշոր հանրայնացված մեքենայական հողագործութիւնը»*)

Նույն այդ միաքը բազմիցս կրկնում է Լեւինը՝ իր մյուս գրվածքներում և ճառերում: Յեզդրանից հետո, ընկ. Ռոզենտալը պնդում է, վոր ՆեՊ-ը չի առաջագրում գյուղի սոցիալիստական վերակառուցման խնդիրը:

Ընկ. Ռոզենտալի այդ ոպրտունիստական սխալները բացատրվում են նրանով, վոր նա չի հասկանում ՆեՊ-ի դիալեկտիկ բնույթը: Վերջինս վորոշակի և պարզ արտահայտված է ՆեՊ-ի հետեյալ չափազանց հաջող բնորոշման մեջ, վոր տվել է ընկ. Ստալինը.

«ՆեՊ-ը պրոլետարական պետութւյան հատուկ քաղաքականութիւնն է, վոր նկատի ունի կապիտալիզմի թուլատրումը՝ պրոլետարական պետութւյան պայմաններում, վոր նկատի ունի կապիտալիստական և սոցիալիստական տարրերի պայքարը, նկատի ունի սոցիալիստական տարրերի զերի աճումը՝ ի վնաս կապիտալիստական տարրերի, նկատի ունի սոցիալիստական տարրերի հաղթանակը և կապիտալիստական տարրերի պարտութիւնը, նկատի ունի դասակարգերի վոչնչացում, սոցիալիստական տնտեսութւյան հիմքի կառուցումը:

*) Լեւին, — Յերկեր, հատ. XVIII, մաս 2.

Ով չի հասկանում ՆեՊ-ի այդ անցողիկ, յերկ-վորակ բնույթը, նա կնշանակե հրաժարվում է լեւինիզմից:*)

ՆեՊ-ը նահանջ է այնքան, վորքան նա վորոշ սահմաններում թուլատրում է կապիտալիզմը. սակայն, նա միաժամանակ հարձակման քաղաքականութիւն է, վորքան վոր նա իրակահացնում է դասակարգերի վոչնչացումը և սոցիալիստական շինարարութիւնը: Ընկ. Ռոզենտալը լավ է հասկացել ՆեՊ-ի մի կողմը՝ նահանջի կողմը, սակայն նա բնավ չի հասկացել մյուս, ավելի կարևոր կողմը: Սյատեղից է բղխում նրա սպորտունիզմը՝ ՆեՊ-ի ըմբռնման մեջ, այստեղից են բղխում նրա սխալները՝ նոր ետապի բացատրման մեջ:

2. ԻՆՉ Ե ՆՈՐ ԵՏԱՊԸ

ՆեՊ-ի սխալ ըմբռնումն անխուսափելիորեն առաջանում է նոր ետապի ելութւյան սխալ ըմբռնումից, «ով-ում» պրոբլեմի սխալ լուծումից, մեր քաղաքականութւյան մեջ նոր ետապի առաջացման պատճառների հարցի սխալ պարզաբանումից և այլն: Սակայն, նախքան այդ մոմենտները պարզելը, կանգ առնենք այն հարցի վրա,

*) Համկոմկոսի 14-րդ համագումարի արձանագրութ. եջ 493:

թիւ ինչ ե նոր ետապը և ինչո՞ւ և կայանում նրա ելուժյունը:

Նոր ետապի սկիզբը կարելի չէ համարել 1928-29 տարին, չե՛րբ խիստ բեկում առաջ չեկավ գյուղացիութեան, նախ և առաջ նրա միջակ մասսաների վերաբերմունքի մեջ զեպի կոլլեկտիվացումը, վորի արտահայտութեանն եր գյուղացիները մասսայաբար մտնելը կոլտնտեսութեաների մեջ: Այդ նշանակում ե, վոր գյուղատնտեսութեանը, կուսակցութեան ճիշտ քաղաքականութեան շնորհիվ, արդեն վտաք զրեց սոցիալիստական վերակառուցման ուղին: Այդ նշանակում ե, վոր գյուղատնտեսութեան ասպարիզում սկսել են զարգանալ ՆԵՊ-ի նախորդ շրջանի պրոցեսներինց տարբեր պրոցեսներ: «Այժմ նոր ձևով ե դրվում ՆԵՊ-ի, դասակարգերի, կոլտնտեսութեանների, անցողական շրջանի եկոնոմիկայի հարցը»^{*}):

Յեթե մինչև նոր ետապը, չնայած կոլտնտեսութեանների և խորտնտեսութեանների ցանցի զարգացման, գյուղատնտեսութեան եկոնոմիկան ուներ մանր գյուղացիական բնույթ, ապա նոր ետապին անցնելուց հետո, հիմք ե դրվում

^{*}) Ստալին—«Սորհրդային Միութեան արարաչին քաղաքականութեան հարցը»:

այդ եկոնոմիկայի համատարած կոլլեկտիվացման սոցիալիստական եկոնոմիկայի հիմքերով: Յեթե մինչև նոր ետապը կուլակի նկատմամբ մենք վարում ելինք նրա շահագործական ձգտումները սահմանափակելու քաղաքականութեան, ապա նոր պայմաններում կուսակցութեանն անցավ յերկրում կապիտալիստական տարրերի վրա ծավալում արշավ գործելու քաղաքականութեանը, սահմանափակման քաղաքականութեանինց՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա, կուլակութեան վորպես դասակարգի վերացման քաղաքականութեանը:

Սակայն, վորովհետև կուլակութեանը, ինչպես և ամեն մի մեռնող դասակարգ, ինչպես մասնանշում ե բնի. Ստալինը, չի ցանկանում կամավոր կերպով հրաժարվել իր տիրապետող դիրքինց, ուստի գյուղատնտեսութեան զարգացման բեկումը տեղի յե ունենում ավելի սրված դասակարգային պայքարում, վորը հետևանք ե կուլակութեան դիմադրութեան մեր սոցիալիստական շինարարութեանը և կոլեկտիվացման դեմ նրա մղած պայքարի:

Գյուղատնտեսութեան շրջադարձը զեպի կոլեկտիվացումը լուծում ե խորհրդային եկոնոմիկայի հիմնական հակասութեանը: Մեր եկոնոմիկայի առանձնահատկութեաններից մեկն ել այն ե, վոր



2282-87

սոցիալիստական շինարարութիւնը տեղի չե ունենում մի այնպիսի յերկրում, վորտեղ տիրապետող և մանր գյուղացիական տնտեսութիւնը, գտնվելով կից պրոլետարական պետութեան ձեռքում կենտրոնացած խոշոր արդյունաբերութեանը: Այստեղից են բղթում մի շարք դժվարութիւններ և հակասութիւններ մեր եկոնոմիկայի մեջ, վորոնցից հիմնականն և սոցիալիստական արդյունաբերութեան և մանր սպրանքալին գյուղատնտեսութեան միջև գոյութիւն ունեցող հակասութիւնը:

Պարզ և, վոր կապիտալիզմի արմատախիլ անելը և սոցիալիստական ծավալուն շինարարութեան զարգացումը նախ և առաջ պահանջում են վերացնել այդ հակասութիւնը, անցնելով խոշոր սոցիալիստական արտադրութեան հողագործութեան ասպարիզում: «Կարելի՞ չե արդյոք, ասում է ընկ. Ստալինը, քիչ թե շատ յերկար ժամանակաշրջանում հիմնել խորհրդային իշխանութիւնը և սոցիալիստական շինարարութիւնը յերկու տարբեր հիմքերի վրա—ամենախոշոր և միացված սոցիալիստական արդյունաբերութեան և ամենից ավելի ցիւր ու ցան, հետամնաց մանր-սպրանքալին գյուղացիական տնտեսութեան վրա: Վոչ: Չի կարելի: Յերբևիցե դրա վախճանը կլի-

նի ժողովրդական ամբողջ տնտեսութեան լիակատար քայքայումը»^{*)}

Գյուղատնտեսութեան սոցիալիստական լայն վերակառուցումը՝ համատարած կոլեկտիվացման և կոլլաւութեան, վորպես դասակարգի վերացման հիման վրա, — լուծում է մեր եկոնոմիկայի այդ հիմնական հակասութեանը: Այդ թելադրվում է սոցիալիստական շինարարութեան անհրաժեշտութեամբ և պատրաստվել է մեր տնտեսական զարգացման նախորդ ժամանակաշրջանով: Նոր ետապը բնորոշվում է այդ հակասութեան լուծմամբ և սոցիալիստական շինարարութեամբ՝ վոչ միայն արդյունաբերութեան, այլ և գյուղատնտեսութեան ասպարիզում: «Յերկրում արդեն տեղի չեն ունեցել տնտեսական այնպիսի խորը փոփոխութիւններ, վորոնք լիակատար հիմք են տալիս պնդելու, վոր մեզ հաջողվեց դարձնել գյուղը դեպի նոր ուղին, կոլեկտիվացման ուղին, դրանով իսկ նշելով սոցիալիզմի ամենահաջող կառուցումը վոչ միայն քաղաքում, այլ և գյուղում»^{**)}:

Այդպես ուրեմն, նոր ետապը կարելի չե բնորոշել վորպես յերկրի կապիտալիստական տարբերի վրա գործվող ծավալուն արշավի ետապ՝

^{*)} Ստալին, — Քաղաքական հաշվաւութիւն Համկոմկուսի 16-րդ համագումարում:

^{**)} Նույն տեղը:

կուլակուլթյան համառ դիմադրութեան և դասակարգային պայքարի սրման պայմաններում, վորպէս գյուղատնտեսութեան կոլեկտիվացման և սոցիալիստական վերակառուցման ետապ, վորպէս համատարած կոլլեկտիվացման հիման վրա կուլակուլթյան, վորպէս դասակարգի վերացման, և դրանով իսկ սոցիալիստական արդյունաբերութեան ու մանր ապրանքային գյուղատնտեսութեան միջև գոյութիւն ունեցող հակասութեան վերացման ետապ:

Նոր ետապին անցնելը միանգամայն որինաչափ յերեւոյթ է, վոր թեւադրվում է ժողովրդական ամբողջ անտեսութեան սոցիալիստական վերակառուցման անհրաժեշտութեամբ: Այդ անցումը պատրաստված է յեղել մեր նախորդ զարգացման ամբողջ ընթացքով, յերբ ստեղծվել են այդ անցումը հնարավոր դարձնող մի շարք պայմաններ:

Իրա համար էլ իրավացի չէ ընկեր Բուխարինը, վորն իր «Великая реконструкция» հոդվածում («Պրավդա»), ասում է, վոր նոր ետապը, համատարած կոլլեկտիվացման քաղաքականութեան անցնելը «անսպասելի չէր», «չէր նախատեսված», վոր նա «խաղաղ նիրհում եր պատմութեան խորը ծալքերում և հանկարծ դուրս սողաց»: Լենինի կոպերատիվ պլանի իրական-

ցումը, կուլակուլթյան շահագործման սահմանափակման, կապիտալիստական տարրերին դուրս մղելու քաղաքականութեանը, սոցիալիստական խոշոր արդյունաբերութեան զարգացումը և այլն—կազմում են այն պայմանների ամբողջութեանը, վորոնք մտակցելին մեզ նոր ետապին և անխուսափելի դարձրին մեր անցումը դեպի այդ նոր ետապը:

Նոր ետապին անցնելու հող նախապատրաստելու պայմանների շարքում առաջին տեղն անպայման պատկանում է արդյունաբերութեանը: Արդյունաբերութեան վերականգման և աճման հիման վրա մեզ հաջողվեց բարձրացնել ժողովրդական ամբողջ անտեսութեան մակարդակը: Շնորհիվ ծաղկած արդյունաբերութեան գոյութեան, մեզ հաջողվեց վերջին տարիները գյուղին հայթայթել արակտորներ ու գյուղատնտեսական այլ մեքենաներ և այդպիսով ստեղծել սկզբնական յեղակետ՝ խոշոր կոլլեկտիվ հողագործութեան անցնելու համար:

Սակայն մեծ սխալ կլիներ կարծել, վոր նոր ետապի և գյուղատնտեսութեան անմիջական սոցիալիստական շինարարութեան անցնելու միակ պատճառն՝ արդյունաբերութեանն է չեղել: Այդպիսի սխալ է գործում ընկ. Թոգենտալը: Նրա տեսակետով «միայն յեղ. միայն խոշոր սոցիա-

լիստական արդյունաբերությունն է, վոր ընդու-
նակ է վերակառուցել գյուղացիական տնտեսու-
թյունը և վոր «չքավոր-միջակ մասսաների դեպի
տնտեսության կոլլեկտիվ ձևերը գործած շարժ-
ման չեղակեալ անտարակուշա, խոշոր սոցիալիս-
տական արդյունաբերության աճումն է»*):

Նույնն է պնդում, ըստ եյության, նաև ընկ-
Քուտայեվը. «Իրա միակ հիմքը հանգիստանում էր
և հանգիստանում է խոշոր, լաջն զարգացած սո-
ցիալիստական արդյունաբերությունը, վորը սխալն
ընդունակ է վերակազմելու նաև հողագործու-
թյունը»:**)

Կասկածից դուրս է արդյունաբերության կա-
րևոր և վճռական նշանակությունը՝ համատարած
կոլլեկտիվ հողագործության անցնելու գործում:
Սակայն այդ պրոցեսի միակ պատճառը համարել
արդյունաբերությունը, նշանակում է արհեստա-
կան կերպով կտրել արդյունաբերության զար-
գացումը ժողովրդական տնտեսության մյուս ճյուղ-
երի աճումից ու ամրացումից, նշանակում է
Ղլատել ինդուստրացման և կապիտալիստական
տարրերին դուրս մղելու քաղաքականությունը,
վորը նկատի ունի ժողովրդական ամբողջ տնտե-

*) «Բալլեիկ», 7—8, էջ 123:

***) «Բալլեիկ», № 5, էջ 77:

սության սոցիալիստական վերակազմումը: Այդ-
պես պնդել—նշանակում է մասնալ մեր գար-
գացման պատմությունը և մի շարք այլ պայման-
ները, վորոնք ի մի առջալ, արդյունաբերության
զարգացման հետ միասին՝ հասցրին մեզ նոր ե-
տապին: Ընկ. Ստալինը 16-րդ համագումարում
հայտարարելով, վոր «այդ շրջադարձը պատրաս-
տվել է աստիճանաբար, մեր զարգացման ամ-
բողջ ընթացքով», մանրամասնորեն թվարկում է
այն պայմանները, վորոնք հնարավոր դարձրին
այդ շրջադարձը: Վերջինս պատրաստվել է ին-
դուստրիայի աճմամբ, կուլակության դեմ մղվող
վճռական պայքարի քաղաքականությամբ, գյուղ-
ատնտեսական կոոպերացիայի, կոլլեկտիվ ու
խորհրդային տնտեսությունների ցանցի զարգաց-
մամբ և այլն:*)

Մոռանալ այդ պայմանների մասին, նշանա-
կում է միմիայն տեխնիկային վերագրել գյուղում
տեղի ունեցած սոցիալական կարևոր բեկումը,
նշանակում է հասնել մարքսիստական մտքի հետ
վոչ մի առնչություն չունեցող այն մտքին, թե
խոշոր արդյունաբերությունը կարող է «ինքն իր-
են» կոլլեկտիվացում ստեղծել գյուղատնտեսու-

*) Տե՛ս Ստալինի գեկուցումը 16-րդ համագումար-
ում. մասն 2-րդ, § 5:

թյան մեջ: Պրոլետարիատի գիկտաաուււրայի որօք գյուղում սոցիալական հարաբերությունների փոփոխումն, այդ տեսակետից, ունի վճռական նշանակութիւն: Գյուղացիների հրաժարումն անհատական անտեսությունից և նրանց միանալը կոլլեկտիվ անտեսության մեջ՝ փոխում է սոցիալական հարաբերությունները գյուղում, ստեղծում է սոցիալիստական հարաբերություններ գյուղատնտեսական արտադրության մեջ և, այդպիսով, հոյ է պատրաստում մեքենայական տեխնիկայի գործադրման համար, վորն արդեն հիմք է դառնում գյուղի վերջնական սոցիալիստական վերակառուցման:

Սոչոր արդյունաբերության դերին վերաբերյալ տեսական բոլոր դասողությունները հերքւում են նույնպէս այն պարզ փաստով, վնր գյուղացիների միանալը կոլտնտեսությունների մեջ հնարավոր է և կատարւում է առանց տրակտորների, գյուղացիական հին տեխնիկայի հիման վրա: Այդպիսի միացումը, վոր փոխում է սոցիալական հարաբերությունները, ստեղծում է նաև տեխնիկական վիթխարի առավելություններ, համեմատած գյուղացիական անհատական անտեսության հետ: «Գյուղացիական գործիքների պարզ միացումը կոլտնտեսությունների մեջ տվել է այն-

պիսի արդյունք, վորի մասին չէլին ել չերագում մեր պրակտիկները»*):

Առանց տրակտորների և այլ մեքենաների, գյուղացիական արտադրական միջոցները հիման վրա կազմված կոլտնտեսություններում, բանվորական ուժի և արտադրական միջոցների հգտագործման արդյունավետությունը և գյուղացիական աշխատանքի վորակական ցուցանիշները 40—50 տոկոսով ավելի բարձր են, քան անհատական գյուղացիական անտեսության մեջ**):

Տնտեսական ու դասակարգային հարաբերությունների արմատական փոփոխությունների և կուլակության, վորպէս դասակարգի վերացման քաղաքականության պայմաններում հոր ձևով է գրվում գյուղում պրոլետարիատի հենարանի ձայնը: Շնորհիվ կուսակցության ճիշտ քաղաքատնության և լինինյան լողունգի ճիշտ գործադրման (սոուր հենվել չքավորի վրա, դաշն կնքել միջակի հետ և վճռական պալքար մղել կուլակի դեմ), գյուղի միջակ մասսաները, չքավորների հետեից, շրջադարձ կատարեցին դեպի կոլտնտեսությունները:

*) Ստալին, — «Սորհրգային Միության ագրարային բողոքականության հարցերը»:

***) Տես ընկ. Յակովլևի ղեկուցումը 16-րդ կուսհամագումարում: Բաժին 2-րդ, § 2:

Մտնելով կոլտնտեսութունները մեջ, միջակը, մանավանդ համատարած կոլլեկտիվացման շրջաններում, սեփականատերից, անհատական տնտեսութուն վարողից վերածվում է կոլտնտեսականի, հանրաջնացված արտադրության մեջ աշխատողի: Դրանով իսկ միջակը դառնում է սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակիցը, դրանով իսկ պրոլետարիատի նպատակը, այն է՝ կապիտալիզմի արմատները վոչնչացումը և գյուղատնտեսութունը սոցիալիստական վերակառուցման ուղիով ամրացնելը՝ դառնում է նաև կոլտնտեսության մեջ մտած միջակի խնդիրը:

Այդ հիման վրա փոփոխության է յենթարկվում պրոլետարիատի և միջակի քաղաքական փոխհարաբերութունը: Միջակը, վոր մեր դաշնակիցն էր, կոլլեկտիվ մտնելով, չքավորի հետ միասին դառնում է պրոլետարիատի հենարանը գյուղում: «Այուսհետև, ԽՍՀՄ-ի կարևորագուցն հացահատիկային շրջաններում գյուղը բաժանվում է չերկու հիմնական մասի՝ կոյսնեստականների, վորոնք հանդիսանում են խորհրդային իսխանության իրական յեւլ ատուր հեծաբանը և վոչ կոլտնտեսական չքավոր ու միջակ գյուղացիների, վորոնք առայժմ չեն ցանկանում մտնել կոլտնտեսութունները, սակայն, վորոնց՝ կոլտնտեսութունները մասսայական փորձը, համեմատաբար

կարճ ժամանակամիջոցում անտարակույս, կհամոզի բռնել կոլլեկտիվացման ուղին»:^{*})

Հասկանալի յե, վոր լենինյան հին ֆորմուլը (հենվել չքավորի վրա, դաշն կնքել միջակի հետ և պալքար մղել կուլակի դեմ) փոփոխությունների յե յենթարկվում: Այժմ արդեն, նոր ետապում, գյուղում պրոլետարիատի ամուր հենարան է հանդիսանում վոչ միայն չքավորը, այլ և կոլտնտեսութուն մտած միջակը: Ուպրառնիստական կոպիտ սխալ են գործում նրանք, ովքեր կարծում են, վոր այդ ֆորմուլն անձեռնմխելի յե մնում, վոր վոչ մի տարբերութուն չկա միջակ կոլտնտեսականի և կոլտնտեսութունից դուրս մնացած միջակի միջև: Նրանք չեն նկատում գյուղում տեղի ունցած խորը բեկումը, նրանք չեն հասկանում, վոր շնորհիվ հենց այն հանգամանքի, վոր միջակ մասսաները շրջադարձ են կատարել դեպի կոլլեկտիվները, հնարաբար վոր դարձավ գյուղատնտեսութունը վճռական կերպով դնել սոցիալիստական սերմերի վրա, նրանք չեն հասկանում, վոր կոլտնտեսական միջակը նույնքան թշնամի յե կոլտնտեսության դեմ կատողի պալքար մղող կուլակին, վորքան պրոլետարիատն ու չքավորները:

^{*}) 16-րդ կուսհամագումարի բանաձևն ընդ. Յակովլևի ղեկուցման առթիվ:

Սակաջն վոչ պակաս կոպիտ սխալ են գործում նրանք, ովքեր կարծում են, վոր լենինյան լոգոնգն ամբողջովին վերացվում է, վոր պրոլետարիատի և միջակ գյուղացիության դաշինքի քաղաքականությունը նոր ետապում սեղ չունի: Նրանք մոռանում են, վոր «կոլանտեսական—միջակը պրոլետարիատի հենարանն է» լոգոնգը ուժ ունի միմիայն համատարած կոլեկտիվացման շրջանների համար: Այդ շրջաններից դուրս, մասնավանդ հետամնաց շրջաններում, վարակող կոլանտեսական շարժումը դեռ թույլ է, վորոնեղ միջակին դեռ անհրաժեշտ է գրավել դեպի կոլանտեսություն, միջակի հետ դաշն կնքելու լոգոնգը լիովին պահպանում է իր ուժը: «Բանվոր դասակարգի և գյուղի չքավորությունն՝ միջակների հետ դաշինքի լոգոնգը վորոշում է գյուղի զարգացումը մինչև կոլանտեսության դռները»:^{*)} Նրանք չեն հասկանում այն, վոր կոլեկտիվացում դեմ հաշոդ պայքար մղել, գյուղացիական մասսաներին դեպի կոլեկտիվացումը դարձնել հնարավոր է հետևողականորեն զործադրելով միջակի հետ դաշն կնքելու լոգոնգը: «Անհատական տեսություններից կոլեկտիվ տեսություն անցնել կարելի չէ

*) Տես ընկ. Յակովլևի գեկուցումը 16-րդ կուսահամագումարում, 4-րդ բաժին, § 2:

միմիայն հիմնվելով բանվոր դասակարգի և չքավորների դաշինքի վրա միջակի հետ»:^{*)}

Լենինի վերոհիշյալ լոգոնգը չի վերացվում: Նա պահպանվում է այն շրջանների համար, վորոնեղ դեռ անհրաժեշտ է իրականացնել համատարած կոլեկտիվացումը: Սակաջն այդ չի նշանակում, վոր հին և նոր լոգոնգները հավասարազոր են ներկայումս: Միջակի հետ դաշն կնքելու լոգոնգը պահպանվում է, սակաջն առաջատար լոգոնգը դառնում է արդեն՝ «պրոլետարիատի հենարանը կոլանտեսականն է» լոգոնգը: Յեթե կոլեկտիվացման դեմ պայքարելու և կոլեկտիվ տեսություն անցնելու խնդիրը «կարելի չէ իրականացնել՝ միմիայն հիմնվելով բանվոր դասակարգի և չքավորների դաշինքի վրա միջակների հետ», ապա ակնհայտ է, վոր միջակի և նրա հետ կնքված դաշինքի թերագնահատման դեմ պետք է պայքարել նախկին վճռականությունը: Միջակի թերագնահատումը չեղել է կոլանտեսական շարժման մեջ մեր գործած սխալներից ամենակարևորագույնը: Այն հարցումին, թե վո՞րն է մեր սխալների արմատը գյուղացիական հարցում, ընկ. Ստալինը պատասխանում է. «Միայն մոտեցումը միջակին, տեսական հարաբերությունների սու-

*) 16-րդ կուսահամագումարի բանաձևն ընկ. Յակովլևի գեկուցման առթիվ:

պարկպոմ միջակի նկատմամբ բռնութիւնն՝ թույլ տայր, աչն, վոր մենք մոռանում ենք, թե միջակ մասսաների հետ մեր տնտեսական կապը պետք է կառուցված լինի վոչ թե բռնի միջոցների, այլ միջակի հետ համաձայնութեան գալու, միջակի հետ դաշն կնքելու հիման վրա»*):

Կուսակցութիւնը վճռական պայքար մղելով չափազանցումների և միջակի թերագնահատման դեմ, շակեց գրութիւնը գլուղում, վորտեղ մտացել է գրական հսկայական բալանս, չնայած մեր գործած կոպիտ սխալներին: Սակայն, մեր գործած սխալների խոստովանումի և նրանց շակման հետ միասին չի կարելի հանդուրժել վորևէ հաշտ-վողական վերաբերմունքը՝ դեպի տեղի ունեցած փոփոխութիւնները և կուսակցութեան նոր լողունգների թերագնահատումը: Այլ ուկլոնիստները, չհասկանալով նոր ետապի ելութիւնը և աչն պարագան, վոր այսուհետև կուսակցութեան առաջատար նշանաբանն է դառնում «պրոլետարիատի ճենարանը կորսնտեսականն է», հայտարարեցին, վոր ձախ չափազանցումների դեմ մղվող պայքարը կուսակցութեան հետ նահանջ է նշանակում, սկսեցին խոսել աչն մասի, թե կուսակցութեան, վորպես դասակարգի վերացման լո-

*) Ստալին. — «Պոտոսխան բնկ. կորսնտեսականներին»:

ղունգն անիրագործելի չե և վնասարար: Պարզ չե՞ միթե, վոր աջերի դեմ մղվող վճռական պայքարը, կցանքի փաստերը և կորսնտեսական առաջիկա նոր ալիքը նրանց դեն կշարտի նոր ետապի հիմնական խնդիրների հաջող լուծման և մեր սոցիալիստական վերելքի ճանապարհից:

Յ. ՎԵՐԱՑՎՈՒՄ Ե՞ ԱՐԴՅՈՔ ՆԵՊ-Ը: ԼՈՒԾՎԱԾ Ե՞ ԱՐԴՅՈՔ «ՈՎ—ՈՒՄ» ՊՐՈՒԼԵՄԸ

Այլ ուկլոնիստները հայտարարեցին, թե նոր ետապին անցնելը հանդիսանում է ՆԵՊ-ի վերացում և վերադարձ դեպի ռազմական կոմունիզմ: Այդ վերաբերմունքը դեպի նոր ետապը բղխում է աջերի սպորտունիստական իդեոլոգիայի ամբողջ սխտեմից, նրանից, վոր աջերը սեալ են մեկնաբանում ՆԵՊ-ը և պայքարում են կուսակցութեան սոցիալիստական շինարարութեան հիմնական գծի դեմ:

Այն հարցը, թե նոր ետապին անցնելով վերացվում է արդյոք ՆԵՊ-ը, թե՞ նոր ետապը պարփակվում է ՆԵՊ-ի շրջանակներում, վորի սկզբներին վրա մենք շարունակում ենք մեր հետագա զարգացումը— կարելի չե՞ ճիշտ լուծում տալ միմիայն այն դեպքում, յեթե մենք ճիշտ բմբոնենք ՆԵՊ-ը և նոր ետապի բնույթը: Յեթե ՆԵՊ-ը նույնպես արշավ է սոցիալիստական եկոնոմիկայի ֆունդա-

մենար կառուցելու համար, ապա տխրեցի ե, վոր նոր ետապը հանդիսանում է հենց ՆԵՊ-ի նոր ետապը, վորակապես սակայն տարբերվելով նրա նախորդ շրջանից: Իսկ յեթե ՆԵՊ-ը միմիայն նահանջ է և մենք ձեռնամուխ ենք լինում սոցիալիստական շինարարությունը, թեև կոխելով միայն նոր ետապը, ապա պարզ է, վորը ՆԵՊ-ը վերացվում է և մենք վոտք ենք դրել մեր գարգացման նոր ետապին, վոր սկզբունքորեն տարբեր է ՆԵՊ-ից:

Հենց այդպիսի սխալ հետևություն է հանգում ընկ. Ռոզենտալը: Նրա անսակետով, ինչպես տեսանք, ՆԵՊ-ը միայն նահանջ է: Նոր ետապին անցնելը հանդիսանում է մի անցում պաշարումից դեպի գրոհ, նահանջից դեպի անմիջական սոցիալիստական շինարարություն: Ընկ. Ռոզենտալի համար նոր ետապը «ունի սկզբունքային վորակական տարբերություն» ՆԵՊ-ի նրկատմամբ: Այդ պատճառով, «անցման շրջանի պատմություն մեջ, անտեսական նոր քաղաքականությունը նախապատմությունն է հանդիսանում սոցիալիստական շինարարության՝ ժողովրդական ամբողջ անտեսություն մեջ»:*)

*) Բայլեիկ, № 5, 1930 թ. էջ 69:

Յեթե այդ այդպես է, յեթե ՆԵՊ-ը հանդիսանում է սոցիալիստական շինարարության միայն նախաբանը, ապա պարզ է, վոր նոր ետապը չի պարփակվում ՆԵՊ-ի շրջանակներում: «Տեսնական ու քաղաքական այն մի շարք ձեռնարկումները, վոր մենք սկսել ենք կիրառել, շարունակում է ընկ. Ռոզենտալը, չեն պարփակվում արևտեսական նոր քաղաքականության շրջանակներում... Կարելի՞ յեր արդյոք ասել, վոր այն նոր յերևույթը, վոր գոյություն ունի անտեսական քաղաքականության մեջ, պարփակվում է ՆԵՊ-ի շրջանակներում: Իհարկե՝ վոչ: Այդ տարբեր քաղաքականություն է»:*)

Ընկ. Ռոզենտալը այդպիսի չեղրակացություն է հանգում այն պատճառով, վոր նախ սխալ է հասկանում նոր ետապի խնդիրները և յերկրորդ՝ ՆԵՊ-ը համարում է միայն նահանջ: Նոր ետապը վորակապես անպայման տարբերվում է ՆԵՊ-ի նախորդ շրջանից, վորովհետև մենք կապիտալիստական տարբերի սահմանափակման և դուրս մղելու քաղաքականությունից անցել ենք կուլակություն, վորպես գոսակարգի վերացման քաղաքականության համատարած կոլլեկտիվացման, մանր ու անհատական արտադրություն վերակա-

*) Բայլեիկ, № 5, 1930 թ. էջ 82, 84:

ոււցման: Սակայն այդ քաղաքականութիւնը տարբեր լինելով մինչև նոր ետապը կիրառվող ՆեՊ-ի քաղաքականութիւնից, նախակ ունի լուծել նույն այն հիմնական խնդիրները, վորը ք գրված էին ՆեՊ-ի առաջ և վորոնք դեռ մնում են, այսինքն՝ գյուղատնտեսութեան կողլեկտիվացումը, չերկրի ինդուստրացումը, կապիտալիզմի արմատների վոչնչացումը և սոցիալիստական տնտեսութեան հիմքի կառուցումը:

Մենք, թեակոխելով նոր ետապը, վերջին և վճռական կոիվը ենք մղում կապիտալիզմի դեմ և վերջնականապես կառուցում ենք ու ամրացնում սոցիալիստական եկոնոմիկալի հիմքը: Սակայն, այդ դեռ սոցիալիզմ չե, ինչպես կարծում է Ռոզենտալը: Դեռ իրենց գոյութիւնը պահպանող դասակարգերի վոչնչացումը և գյուղատնտեսութեան կողլեկտիվացման խնդիրները լուծումը տեղի յե ունենալու դասակարգային սուր պայքարի պայմաններում: Մնում է շուկան, զրամական սիստեմը, մասնավոր առևտուրը և այլն: Ուստի նոր ետապը չի վերացնում ՆեՊ-ը, այլ կազմում է նրա վերջին աստիճանը: «Ամբողջ ֆրոնտով հարձակման զիմելով, —ասում է ընկ. Ստալինը, — մենք դեռ չենք վերացնում ՆեՊ-ը, վորովհետև մասնավոր առևտուրը և կապիտալիստական տարրերը դեռ մնում են, սպրանքաշրջանառութիւնը և

փողային տնտեսութիւնը դեռ մնում են: Սակայն, մենք տնտարման վերացնում ենք ՆեՊ-ի սկզբնական աստիճանը, զարգացնելով նրա հաջորդ աստիճանը, զարձնելով վերջինս ՆեՊ-ի ներկա փուլը, վորը հանդիսանում է ՆեՊ-ի վերջին աստիճանը»:^{*})

Յեթե այդ այդպես է, յեթե նոր ետապը չի վերացնում ՆեՊ-ը, այլ հանդիսանում է ՆեՊ-ի վերջին աստիճանը, սպա ակներև է, վոր դեռ վերջնականապես չի լուծված լենինյան «ով — ում» պրոբլեմը: Սակայն, գտնվեցին մարդիկ, վորոնք զլիսպառույթից հասան այնտեղ, վոր հայտարարեցին, թե «ով — ում» պրոբլեմն արդեն լուծված է, վոր նա, նոր ետապին անցնելուց հետո, վերացված է: Այդպես է կարծում ընկ. Բոգոչեվսկին: Նա այդ խոշոր սխալը գործում է, լենելով արդեն մեր վերլուծած այն զրուլթից, թե նոր ետապը վերացնում է ՆեՊ-ը, պնդելով վոր ՆեՊ-ը վերջացել է, վոր ՆեՊ-ը ապրում է իր վերջալույսը»: «За индустриализацию» թերթում ընկ. Բոգոչեվսկին զրում է, վոր «մրցումը «ով ում» վերջացած է», վոր «հնգամյակի առաջին տարին լուծեց լենինյան «ով ում» հարցը»:^{**}):

«Ինչո՞ւ չի լուծված «ով — ում» պրոբլեմը:

^{*}) Տես ընկեր Ստալինի «Քաղաքական հաշվետվութիւնը» Համկոմկուսի 16-րդ համագումարում:

^{**}) „За индустриализацию“ թերթի 1930 թ. հունվարի 21-ի առաջնորդողը:

Այն պատճառով, — պատասխանում է ընկ. Բոգոլ-
շեվսկին, — վոր մեզանում արգեն համարյա լի-
վին իրագործված է սոցիալիզմը: «Նոր ետա-
պում» հորվածում հա գրում է հետևյալը. «Հրա-
մանատարական այն բարձունքները, վորոնք իր
ձեռքն է առել պրոլետարիատը ՆԵՊ-ի սկզբում,
աստիճանաբար ընդարձակվել, դարձել են սո-
ցիալիստական համատարած մի պլատո (գաշտա-
վաչք), վորը միայն տեղ-տեղ կտրված է մաս-
նավոր անտեսական հատվածի ճեղքերով: Այս-
տեղից, հնարավորություն է ստացվում անցնե-
լու ուղղակի ուղեբառով ներգործման՝ ժողովրդ-
րական անտեսություն ըզրոր ճյուղերի վրա»:*)

Այդպիսով «ով—ում» պրոբլեմը լուծված է,
վորովհետև մեզնում գոյություն ունի արգեն
«համատարած սոցիալիստական պլատո»: Իժվար
չե նկատել, թե վորքան յերերուն և անհեթեթ է
ընկ. Բոգոլշեվսկու ալդ տեսակետը: Վերջին տա-
րիներս մենք անպայման վիթխարի հաջողու-
թյուններ ենք ձեռք բերել յերկրի ինդուստրաց-
ման, գյուղատնտեսության հանրացնացման, կա-
պիտալիստական տարրերը դուրս մղելու ասպա-
րիզում: Մենք վոտք ենք դրել կապիտալիզմի
դեմ մեր մղած վճռական կռվի վերջին ետապը:

*) «За индустриализацию» թիւթի 1930 թ.
փետրվարի 9 և 11 համարները:

«Մենք թեվակոխում ենք սոցիալիստական
շինարարության անմիջական շրջանը, սոցիալիզմի
շրջանը: Այդ նշանակում է, վոր մեր յերկրում,
ներքին ուժերի տեսակետից, սոցիալիզմի հաղ-
թանակի խնդիրը վճռված է և սոցիալիզմի հաղ-
թանակը լիովին ապահովված է:» *)

Մեր հսկայական հաջողությունները սոցիա-
լիստական շինարարության ասպարիզում ապա-
հովում են 1931 թվին — հնդամյակի 3-րդ տարում
սոցիալիստական եկոնոմիկայի ֆունդամենտի
կառուցման ավարտումը: Իրանով մենք թեվա-
կոխում յենք սոցիալիզմի առաջին շրջանը:

Բայց դա դեռ չի նշանակում, վոր մենք
ամբողջովին ավարտել ենք սոցիալիզմի կառու-
ցումը:

Չի կարելի խոսել սոցիալիզմի, «համատա-
րած սոցիալիստական պլատոյի մասին», յերբ
գյուղացիական տնտեսությունների դեռ 50 տո-
կոսից ավելին մնում է կոլտնտեսություններից
դուրս և մեր առաջ ծառայած է այդ գյուղացի-
ներին կոլտնտեսությունները ներգրավելու ու
նրանց գյուղացիական բնույթը փոխելու կարևո-
րագույն խնդիրը: Չի կարելի ասել, թե մեզանում

*) Մոլոտով, — ԽՍՀՄ կառավարության զեկուցու-
մը համամիութենական խորհուրդների 6-րդ համագու-
մարում:

արդեն գոյութիւնն ունի սոցիալիզմը, յերբ գեո-
պահպանվում է շուկան, առևտուրը, մասնավոր
կապիտալը: «Ուլ-ոււմ» պրոբլեմն ամբողջովին լուծ-
ված է սոցիալիստական արդշունաբերութեան
ասպարիզում հոգուտ սոցիալիզմի: Բայց չի կա-
րելի ասել, թե «ուլ-ոււմ» պրոբլեմն արդեն վերջ-
նականապես լուծված է, յերբ մեր առաջ գրված է՝
համատարած կոլեկտիվացման հիման վրա, կու-
լակութեանը վորպես դասակարգի վերացման գրժ-
վարագույն գործի իրականացման խնդիրը: ՆՆՊ-ը
պահպանվում է, հետևապես պահպանվում են նաև
բոլոր խնդիրները, վորոնք գրված են ՆՆՊ-ի առաջ,
և վորոնք վերջնականապես լուծվելու չեն ՆՆՊ-ի
նոր և վերջին ետապում:

Սակայն յերբ «դեն կշարտենք մենք ՆՆՊ-ը»
(Ստալին): Միմիայն այն ժամանակ, — պատաս-
խանում է ընկեր Ստալինը՝ սվերդլովցիներին
ուղղված իր նամակում, — «յերբ մենք հնարավոր-
ութիւն կստանանք տնտեսական կապեր հաս-
տատելու քաղաքի ու գյուղի մեջ՝ միթերքների
փոխանակման միջոցով, առանց առևտրի և նրա
մասնավոր շրջանառութեան, վորը հնարավոր է
դարձնում կապիտալիզմի վորոշ աշխուժացումը»:

ՆՆՊ-ը չի վերացվում, հետևապես վերջնա-
կանապես չի լուծված նաև ՆՆՊ ի հիմնական

խնդիրը՝ «ուլ-ոււմ» պրոբլեմը: Իսկ ընկ. Բոգու-
շևսկու այն սյնդումը, թե «ուլ-ոււմ» պրոբլեմն
արդեն լուծված է, արտահայտում է այն ընկեր-
ների տրամադրութիւնները, վորոնց գլուխը չա-
փագանց պատել է մեր հաջողութիւններին:

Ընկ. Բոգուշևսկու, ինչպես և ընկ. Ռոզեն-
տալի ըմոնումը, թե ՆՆՊ-ն արդեն վերացել է,
չնայած արտաքուստ նրա ձախ բնութիւն, ամ-
բողջովին ոպորտունիստական է և հանգում է
աջերի այն իգեոլոգիային, թե հնարավոր է կա-
պիտալիզմի ներաճումը սոցիալիզմի մեջ, առանց
դասակարգային պայքարի, առանց պրոլետարիա-
տի ակտիվ ներգործման: Այդ տեսութիւնները
թմրեցնում են կուսակցութեան և պրոլետարիա-
տի ուշադրութիւնը, նրանք թուլացնում են պրո-
լետարիատի թափը՝ նոր ետապի կարևորագույն
խնդիրների լուծման ասպարիզում և գրանով իսկ
ուժեղացնում են աջ թեքման սև դասակարգային
թշնամիներին զիրքերը: Ուստի, անհրաժեշտ է
մինչև վերջը մերկացնել այդ տեսութիւնների
ոպորտունիստական էյութեանը և, մեր առաջ
ծառայած խնդիրները լուծելու համար, մոբիլի-
զացիայի յենթարկել բանվորական մասսաների
ամբողջ ակտիվութիւնը:

Մենք թևակոխելենք ՆՆՊ-ի նոր և վերջին

ետապը, կուլակուլթյան, վերպես դասակարգի վե-
 րացման և կապիտալիզմի արմատների վոչնչաց-
 ման ետապը, կապիտալիզմի դեմ մղվող վճռա-
 կան և վերջին կովի ետապը: Այդ կովում սո-
 ցիալիզմի հաղթանակն ապահովված է: Սակայն
 դրա համար անհրաժեշտ է նախ և սուղ մորի-
 լիզացիայի լենթարկել պրոլետարիատի ուշադրու-
 թյունն ու ակտիվութունը, շարունակել պայ-
 քարը մեր դասակարգային թշնամու դեմ: Մինչև
 վերջը մերկացնելով և սլայքարելով գլխավոր աջ
 թեքման պրակտիկայի և նրա պարտիոզական ի-
 դեոլոգիայի դեմ, չթուլացնելով չերբեք սլայքա-
 րը արոցկիզմի և «ձախ» խոտորումների դեմ, դեն
 շարտելով սլրոլետարիատի զգոնությունը նիր-
 հեցնող ամեն տեսակ տեսությունները, մեր կու-
 սակցությունը համառ և անշեղ կերպով բանվոր
 դասակարգին կառաջնորդի դեպի սոցիալիզմի
 վերջնական հաղթանակը:

« Ազգային գրադարան »



NL0209516

31. 946

ԳԻՆԸ 20 ԿՈՂ.

Դիմե՛ք ՅՆՐԸՆ, Հոգեղեմա՛տ՝ Էրատարակչութեան
և Հայկազի օւ Բանկոպի կենտրոնա-
կան և շրջանային գրախա-
նութներին: